Հավելված N 2
2025 թվականի հունվարի «15»-ին կնքված
«1032-11002/2025-ԱՏ» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություն |
| Դրամաշնորհի N | 1032-11002/2025-ԱՏ |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2025-30.09.2025 |
| Ներկայացման օր | 10.10.2025 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Լիլիթ Մուրադյան, Ծրագրի համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար։

1.3. Խնամքի ծառայությունների տրամադրում:
3.1.Սոցիալական աշխատողի խորհրդատվություն:
5.1.Համայնքային գործընկերների ներգրավում և համագործակցության պայմանների սահմանում:
5.2. Համայնքային միջոցառումների կազմակերպում և տարեցների մասնակցության խթանում:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար։ Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը։

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրից օգտվել է 23 շահառու, որոնցից 17-ը միայնակ տարեցներ են, 9-ը ունի հաշմանդամություն։ Ծրագրի միջոցով նրանք հնարավորություն են ստանում պահպանել իրենց անկախությունը, ֆունկցիոնալ կարողությունները և աջակցություն գտնել այն հարցերում, որոնցում ինքնուրույն դժվարանում են::

**Իրականացված գործողություններ**

**1.3. Խնամքի ծառայությունների տրամադրում**
Տնայցերի միջոցով շահառուներին տրամադրվել են սոցիալական ծառայություններ, ներառյալ՝
- խանամք՝ անձնական հիգիենայի ապահովում, կերակրում,
- աջակցություն առօրյա գործողություններում՝ մաքրություն, գնումներ, ուտեստի պատրաստում, վճարումների իրականացում և այլն,
- առողջական վիճակի մշտադիտարկում, դեղորայքի ստացում, դեղորայքի ընդունման վերահսկում,
- ուղեկցում և ուղղորդում,
- սոցիալական խորհրդատվություն օժանդակ միջոցների ձեռքբերման, խնամքի հարցերում:

Ծառայություններն իրականացվել են խնամքի բազմապրոֆիլ թիմի՝ սոցիալական աշխատողի, սոցիալական սպասարկողների և բուժքրոջ մասնակցությամբ: Սոցիալական սպասարկողները, ելնելով գնահատված կարիքներից, աջակցել են տան մաքրության, սանիտարահիգիենիկ պայմանների պահպանման, սնուցման, գնումների, վճարումների և ուղեկցման հարցերում: Բուժքույրը հսկել է ընկնելու բարձր ռիսկ գրանցած շահառուների անվտանգությունը՝ պարբերաբար խորհրդատվություն տրամադրելով տունն անվտանգ դարձնելու վերաբերյալ, վերահսկել առողջական վիճակը՝ օբյեկտիվ ցուցանիշները չափելով և գրանցելով, կազմակերպել բժշկական խորհրդատվություն և բժշկի տնայցեր՝ ըստ անհրաժեշտության:

**3.1. Սոցիալական աշխատողի խորհրդատվություն և աջակցություն**
Շահառուները ստացել են անհատական խորհրդատվություն սոցիալական աշխատողի կողմից, որը օժանդակ միջոցների կարիք ունեցող շահառուներին տրամադրել է խորհրդատվություն դրանց ձեռքբերման գործընթացի մասին, երկուսին օգնել դիմելու և ստանալու գործընթացներում:
**5.1. Համայնքային գործընկերների ներգրավում**
Համագործակցությունը Աշտարակի համայնքապետարանի և ՄՍԾ Աշտարակի տարածքային կենտրոնի հետ շարունակվել է: Համայնքապետարանի աջակցությամբ շահառուների համար էքսկուրսիա է կազմակերպվել դեպի Գյումրի և հարակից տեսարժան վայրեր:
**5.2. Համայնքային միջոցառումներ և տարեցների մասնակցության խթանում**
Ծրագրի շրջանակում տեղի ՀԿ-ների հետ համագործակցությամբ տարեցներն ընդգրկվել են թատերական ներկայացումների հյուրերի շարքում:

**Եզրակացություն**
Տարեցները սեփական օրինակով նպաստում են ծրագրի հանրայնացմանը և նոր շահառուների ներգրավմանը: Այդուհանդերձ, համայնքում դեռ ցածր է ընդհանուր իրազեկվածությունը պետության կողմից բնակիչներին հասանելի անվճար խնամքի ծառայությունների մասին, թյուր են պատկերացումները դրա բնույթի և գործառույթների մասին: Ասոցիացիան նաև սերտորեն համագործակցում է ՄՍԾ Աշխտարակի տարածքային կենտրոնի հետ՝ բնակիչներին իրազեկելու և ծառայության վերաբերյալ ճիշտ պատկերացումներ ձևավորելու նպատակով:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Ծրագրի վերաբերյալ հրապարակումներ չեն կատարվել:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

**Քաղած դասեր**

- Անհատականացված խնամքի պլանների կազմումը և շահառուի կարիքներին համարժեք ծառայությունների տրամադրումը շարունակում են ապացուցել իրենց արդյունավետությունը՝ նպաստելով տարեցների ինքնուրույնության պահպանմանը:
- Համայնքային գործընկերների՝ հատկապես համայնքապետարանի և ՄՍԾ տարածքային կենտրոնի հետ համագործակցությունը վճռորոշ դեր ունի շահառուների ներգրավման և ծրագրի կայունության ապահովման գործում:
- Խնամքի թիմի վերապատրաստումը դրականորեն է անդրադարձել մասնագիտական մոտեցման, հաղորդակցման հմտությունների և թիմային աշխատանքում վստահության մակարդակի վրա:

**Ծագած խնդիրներ**

- Ծրագրի մեկնարկային փուլում որոշ շահառուներ վստահություն չեն ցուցաբերել ծառայության նկատմամբ, ինչը պահանջել է սոցիալական աշխատողի հետևողական աշխատանք շահառուների ներգրավման ուղղությամբ:
- Աշխատակիցների աշխատավարձերը չեն համապատասխանում պետական չափորոշչով սահմանված նվազագույն պահանջներին, ինչը, չնայած թիմի բարձր մոտիվացիային, երկարաժամկետ կտրվածքով կարող է բացասաբար ազդել աշխատանքի որակի, կատարողականի և աշխատակազմի պահպանման վրա: Այս խնդիրը պահանջում է լրացուցիչ ուշադրություն և ռեսուրսների վերանայում:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

1.3.Խնամքի ծառայությունների տրամադրում:
3.1.Սոցիալական աշխատողի խորհրդատվություն:
5.2. Համայնքային միջոցառումների կազմակերպում և տարեցների մասնակցության խթանում:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

Չնայած աշխատանքային պլանով նախատեսված չէր, սակայն ծրագրի նպատակին առավել ամբողջականորեն հասնելու համար իրականացվել են հետևյալ լրացուցիչ գործողությունները․

- Ասոցիացիան շարունակաբար մասնագիտական գործիքներ է մշակում և դրանք փորձարկում տնային խնամքի ծառայությունը շահառուների իրական կարիքներին համապատասխանեցնելու նպատակով:
- Բուժքրոջ կողմից անհատական ուշադրություն է տրամադրվել այն տարեց շահառուներին, ովքեր ունեն ընկնելու բարձր ռիսկ: Տրվել է խորհրդատվություն անվտանգության միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաև աջակցություն՝ տանն անվտանգ միջավայր ձևավորելու և խոչընդոտող հանգամանքները վերացնելու հարցում: Այս գործողությունները նպաստել են շահառուների ֆիզիկական բարեկեցության և խնամքի շարունակականության ապահովմանը:
- Համայնքի ներսում ակտիվորեն շարունակվել է իրազեկման գործընթացը, որի նպատակն էր բարձրացնել ծրագրի տեսանելիությունը, խթանել շահառուների ներգրավումը, ճիշտ պատկերացում ձևավորել ծառայության գործառույթների մասին և ապահովել համայնքային մասնակցության շարունակականությունը:

Այս գործողությունները նպաստել են ծրագրի նպատակներին՝ ուժեղացնելով կանխարգելիչ բաղադրիչը և խորացնելով կապը համայնքի հետ:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

Գլխավոր քարտուղարին փոխարինող՝
Վ. Տեր-Բալյան

-------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Նախագահ՝ Ա. Թորոսյան

Կ.Տ.